Գործ թիվ ՇԴ1/0318/02/18

Վ Ճ Ի Ռ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

05 դեկտեմբերի 2018թ. ք. Գյումրի

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ

նախագահությամբ դատավոր՝	Ս.ՄՆԱՑՅԱՆԻ
քարտուղարությամբ՝	Հ.ԽԱՉԱՏՐՅԱՆԻ
հայցվորի ներկայացուցիչ՝	Ա.ԹՈՐՈՍՅԱՆ
պատասխանողի ներկայացուցիչ՝	Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
երրորդ անձի ներկայացուցիչ՝	Ա.ՄԻՆԱՍՅԱՆ

Դռնբաց դա տական նիստում , քննեց քա ղաքացիական գործն ըս տ հայցի ՝ << Արփի լիճ>> ազգային պարկ>> ՊՈԱԿ-ն /հասցե՝ Շիրակի մարզ, Ամասիայի տարածաշրջան, Բերդաշեն գյուղ, ՀՎՀՀ՝ 05536278, Հ/Հ 220065140049000/ ընդդեմ Համլետ Արշակի Քոթանջյանի /հասցե՝ Շիրակի մարզ, Աշոցքի շրջան, գյուղ Սիզավետ 1 փողոց, թիվ 4 տուն, անձնագիր՝ AG0685082 տրվել է՝ 16.05.2006թ. 034-ից/, երրորդ անձ՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին:

Դատաքննությամբ և գործի նյութերի ուսումնասիրությամբ դատարանը.

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմություն:

Քաղաքացիական գործով հայցվոր՝ <<Արփի լիճ>> ազգային պարկ>> ՊՈԱԿ-ը 27.02.2018 թվականին հայցադիմում է ներկայացրել ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ Համլետ Քոթանջյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին:

28.02.2018 թվականին կայացվել է որոշում՝ հայցադիմումը վարույթ ընդունելու և պետական տուրքի վճարման ժամկետը հետաձգելու մասին:

15.03.2018 թվականին կայացվել է որոշում՝ գործը դատաքննության նախապատրաստելու և նախնական դատական նիստ նշանակելու մասին:

Հայցվոր՝ <<Արփի լիճ>> ազգային պարկ>> ՊՈԱԿ-ը 26.02.2018 թվականին գրավոր կազմված լիազորագրի համաձայն լիազորել է՝ Անի Թորոսյանին դատարանում ներկայացնելու կազմակերպության շահերը:

28.02.2018 թվականին կայացվել է որոշում՝ հայցի ապահովման միջոց կիրառելու մասին:

Պատասխանող՝ Համլետ Արշակի Քոթանջյանի կողմից դատարան է ներկայացվել հայցադիմումի պատասխան, որը Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի գրասենյակ է մուտքագրվել 13.03.2018 թվականին:

Պատասխանող՝ Համլետ Արշակի Քոթանջյանը 05.03.2018 թվականին գրավոր կազմված լիազորագրի համաձայն լիազորել է փաստաբան՝ Արսեն Հարությունյանին /արտոնագիր թիվ 738/ դատարանում ներկայացնելու իր շահերը:

Երրորդ անձ՝ ՀՀ Շիրակի մարզպետարանը 12.03.2018 թվականին գրավոր կազմված թիվ 01/1390-18 լիազորագրի համաձայն լիազորել է ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության գլխավոր մասնագետ Արմեն Մինասյանին և իրավաբանական բաժնի առաջատար մասնագետ Արտյոմ Մանասյանին դատարանում հանդես գալու, որպես երրորդ անձի ներկայացուցիչ:

2. Հայցվոր կողմի իրավական դիրքորոշումը:

Հայցվոր՝ <<Արփի լիճ>> ազգային պարկ>> ՊՈԱԿ-ի ներկայացուցիչ՝ Ա.Թորոսյանը դատաքննության ընթացքում տալով ցուցմունք հայտնել է, որ 2005 թվականի հուլիսի 07-ին Շիրակի մարզի մարզպետ՝ Ռոմիկ Մանուկյանի կողմից լիազորված անձ՝ Լյովա Մաթևոսի Հակոբյանի և ՀՀ քաղաքացի Համլետ Քոթանջյանի միջև կնքվել է հողամասի վարձակալության պայմանագիր: Պայմանագրի 1-ին կետու համաձայն՝ վարձատուն պարտավորվել է վճարի դիմաց վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը հանձնել՝ Շիրակի մարզպետարանին պատկանող 200 հա հողամասը: Պայմանագրի 15-րդ կետի համաձայն՝ վարձակալության գործողության ժամկետը սահմանվել է 25 տարի:

Կողմերի միջև կնքված պայմանագրի 3-րդ կետի համաձայն՝ հողամասի տարեկան վարձավճարը կազմել է 220.000 ՀՀ դրամ, կադաստրային արժեքի 0,63 տոկոսը /հողամասի կադաստրային արժեքը կազմում է՝ 34.500.000 դրամ/: Պայմանագրի 11-րդ կետի համաձայն՝ վարձակալական ընթացիկ վճարումները վարձակալի կողմից ըստ պայմանագրի պետք է մուծվեին հավասար չափերով ըստ տարվա օրացուցային եռամսյակների ոչ ուշ քան մինչև համապատասխան եռամսյակի վերջին ամսվա 25-ը:

Կատարված իրադարձություններից հետո ՀՀ կառավարությունը՝ 16.04.2009թ. թիվ 405-Ն և 21.07.2011թ. թիվ 1151-Ն որոշումներով Շիրակի մարզի Սիզավետ համայնքի վարչական տարածքում գտնվող 2130,7 հա հողերը, այդ թվում 07.07.2005թ. Համլետ Քոթանջյանի հետ կնքված պայմանագրով 25 տարի ժամկետով վարձակալած /օգտագործվող/ 200 հա արոտը, դարձել են պետական սեփականություն, դրանք փոխադրվել են հատուկ պահպանվող տարածքների հողերի կատեգորիա և անհատույց /անժամկետ/ օգտագործման իրավունքով տրամադրվել են <<Արփի լիճ>> ազգային պարկ>> ՊՈԱԿ-ին, որի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը կատարվել է 24.07.2015թ.:

<<Արփի լիճ>> ազգային պարկ>> ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի որոշմամբ փոխվել են հողամասերի վարձավճարների չափերը՝ արոտավայրերի համար 1 հա 3100 ՀՀ դրամ, խոտհարքների համար՝ 1 հա 5300 ՀՀ դրամ:

Հիշյալ ժամանակից բոլոր վարձակալներին բանավոր կերպով ծանուցվել է հողամասերը <<Արփի լիճ>> ազգային պարկ>> ՊՈԱԿ-ի տիրապետման անցնելու փաստի մասին:

Նշված հիմքով՝ 24.07.2015թ. վարձատու է հանդիսանում <<Արփի լիճ>> ազգային պարկ>> ՊՈԱԿ-ը և տվյալ ժամանակահատվածից վարձավճարները պետք է վճարվեն <<Արփի լիճ>> ազգային պարկ>> ՊՈԱԿ-ին:

Այս մասին վարձակալ Համլետ Քոթանջյանը իմանալով ոչ մի վճարում չի կատարել և ներկայումս վարձավճարի պարտքը 2015 թվականի օգոստոսից մինչև 2016 թվականի հունվարը կազմում է 258.000 ՀՀ դրամ, 2016թ. հունվարից մինչև 2017 թվականի հունվարը կազմում է 620.000 ՀՀ դրամ, 2017թ. հունվարից մինչև 2018թ. հունվարը կազմում է 620.000 ՀՀ դրամ: 24.07.2015թ. մինչև 2016թ. 200 հա արոտավայրի համար տարեկան վարձավճարը սահմանված է եղել 220.000 ՀՀ դրամ:

2016 թվականից <<Արփի լիճ>> ազգային պարկ>> ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի

որոշմամբ փոխվել են հողամասերի վարձավճարների չափերը՝ արոտավայրերի համար 1 հա 3100 ՀՀ դրամ, խոտհարքների համար՝ 1 հա 5300 ՀՀ դրամ:

07.11.2017թ. պատասխանողը գրավոր ծանուցվել է վերոնշյալ փոփոխության մասին, սակայն ոչ մի գործողություն չի ձեռնարկել:

Ելնելով վերոգրյալից խնդրել է պատասխանող՝ Համլետ Արշակի Քոթանջյանից հօգուտ <<Արփի լիճ>> ազգային պարկ>> ՊՈԱԿ-ի բռնագանձել՝ 1.498.000 ՀՀ դրամ:

3. Երրորդ անձի ներկայացուցչի իրավական դիրքորոշումը:

Քաղաքացիական գործով երրորդ անձ՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի ներկայացուցիչ՝ Ա.Մինասյանը ներկայացված հայցապահանջի վերաբերյալ որևէ իրավական դիրքորոշում չի հայտնել:

4. Պատասխանող կողմի իրավական դիրքորոշումը:

Քաղաքացիական գործով պատասխանող՝ Համլետ Արշակի Քոթանջյանի ներկայացուցիչ՝ Ա.Հարությունյանը դատաքննության ընթացքում առարկելով հայցապահանջի դեմ հայտնել է, որ ներկայացված հայցապահանջը չի ընդունում, քանի որ պատասխանողին օգտագործման /վարձակալության/ իրավունքով պատկանող հողատարածքի նկատմամբ հայցվորը չունի որևէ իրավունք: Հայցվորի կողմից դատարան չի ներկայացվել որևէ ապացույց, որով կհիմնավորվեր նշված հանգամանքների առկայությունը և առհասարակ նման եզրահանգումն անհասկանալի է: Պատասխանողին պատկանող հողատարածքի սեփականատերը պայմանագրի կնքման պահին հանդիսացել է Հայաստանի Հանրապետությունը և նրա իրավունքը հողատարածքի նկատմամբ գործում է առ այսօր: Այս փաստը հիմնավորվում է ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ կողմից 27.02.2018թ. տրված տեղեկանքով: Հետևաբար ակնառու է, որ հայցվորի վկայակոչած հանգամանքները չեն կարող առկա լինել, իսկ եթե անգամ առկա են ապա իրավաչափ համարվել չեն կարող :

ՀՀ կառավարության 21.07.2011թ. թիվ 1151-Ն որոշման 4-րդ կետի համաձայն՝ սույն որոշման 1-ին կետին համապատասխան՝ պետական սեփականություն հանդիսացող 16168,9 հեկտար տարբեր նպատակային նշանակության հողերը փոխադրել հատուկ պահպանվող տարածքների հողերի կատեգորիա և անհատույց /անժամկետ/ օգտագործման իրավունքով հատկացնել <<Արփի լիճ>> ազգային պարկ>> ՊՈԱԿ-ին, այդ թվում՝ 3/ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սիզավետի գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերից՝ 2130,7 հեկտար: Նույն որոշման 6-րդ կետով սահմանվում է, որ ՀՀ բնապահպանության նախարարին՝ մինչև 2013 թվականի հունվարի 1-ը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել սույն որոշման 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերից բխող պայմանագրերի կնքումը և գույքային իրավունքների պետական գրանցումը՝ <<Արփի լիճ>> ազգային պարկ>> ՊՈԱԿ-ի միջոցների հաշվին: Նշված իրավական ակտի բովանդակությունը վկայում է, որ Սիզավետի գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերից՝ 2130.7 հեկտար հողատարածքները նախ նվիրաբերվել են Հայաստանի Հանրապետությանը, իսկ հետագայում անհատույց օգտագործման իրավունքով պետք է հանձնվեն հայցվորին: Եթե պայմանականորեն ընդունվի, որ պատասխանողի հողատարածքը ներառված է ՀՀ կառավարության որոշմամբ մատնանշված Սիզավետի գյուղական համայնքի 2130,7 հեկտար հողատարածքների կազմում, ապա առնվազն անհասկանալի է թե ինչպես է իրականացվել դրա նկատմամբ հայցվորի օգտագործման իրավունքի պետական գրանցումը, քանի որ դրա նկատմամբ 2005 թվականից գրանցված է պատասխանողի օգտագործման /վարձակալության/ իրավունքը:

Հայցվորի ներկայացուցիչը ներկայացված հայցադիմումում գալիս է նաև այն եզրահանգման որ <<Արփի լիճ>> ազգային պարկ>> ՊՈԱԿ-ը հանդիսանում է Շիրակի մարզի Սիզավետ համայնքի վարչական տարածքում գտնվող 2130,7 հա հողերի, այդ թվում 07.07.2005թ. վարձակալության պայմանագրով պատասխանողին վարձակալության տրված հողի սեփականատեր: Անհասկանալի է թե ինչպես է հնարավոր, որ նույն անձը, այն է՝ հայցվորը հանդիսանա գույքի անհատույց օգտագործողը և միաժամանակ դրա սեփականատերը:

Սույն գործում առկա փաստերի և դրանք հիմնավորող ապացույցների շրջանակներում հայցվորը չի հանդիսանում հողատարածքի սեփականատեր: Հայցվորի և պատասխանողի միջև վարձակալության կամ որևէ այլ տեսակի պայմանագիր չի կնքվել, հետևաբար՝ նրանց միջև բացակայում է որևէ պարտավորական հարաբերություն, որպեսզի պայմաններում հայցվորի պահանջն ուղղված պատասխանողին այս առումով ևս անհիմն է: Բացակայում են նաև պայմանագրով վարձատուի փոփոխության իրավական և փաստական հիմքերը: Հայցվորը իրավասու չէ նաև կատարել պայմանագրի որևէ փոփոխություն, քանզի նա չի հանդիսանում պայմանագրի կողմ:

Ելնելով վերոգրյալից խնդրել է հայցապահանջը մերժել ամբողջությամբ:

5. Դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները:

Այսպիսով, դատարանը գնահատելով դատաքննությամբ ձեռք բերված ապացույցները և քաղաքացիական գործի փաստական հանգամանքները գտնում է, որ պահանջը հիմնավորված չէ այն ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ:

Նախ. դատաքննությամբ հաստատվեց, որ՝2005 թվականի հուլիսի 07-ին Հայաստանի Հանրապետության ի դեմս Շիրակի մարզպետ՝ Ռոմիկ Մանուկյանի /այսուհետ՝ վարձատու/, որի փոխարեն 10.06.2005թ. թիվ 1-01/993 լիազորագրով հանդես է գալիս Լյովա Մաթևոսի Հակոբյանը, մի կողմից և Համլետ Քոթանջյանի /այսուհետ՝ վարձակալ/, մյուս կողմից 2005թ. 14.02-ի թիվ 1 որոշման և 29.04.2005թ. մրցույթի արդյունքների մասին թիվ 4 արձանագրության հիման վրա կնքվել է հողամասի վարձակալության մասին պայմանագիրը, համաձայն որի վարձատուն մրցույթում հաղթող ճանաչված անձին՝ վարձակալին, համապատասխան վարձավճարի դիմաց, նրա տիրապետմանը և օգտագործմանն է տրամադրել Ղարախաչ մասիվ Խնկոյանի տարածք, Աշոցքի վարչատարածքում գտնվող 200 հա մակերեսով հողամասը: Հողամասը տրամադրվել է, որպես արոտ: Հողամասի տարեկան վարձավճարի չափը կազմել է 220.000 ՀՀ դրամ:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի ապրիլի 16-ի 405-Ն որոշմամբ ստեղծվել է <<Արփի լիճ>> ազգային պարկ>> ՊՈԱ կազմակերպությունը: Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 21-ի թիվ 1151-Ն որոշմամբ հաստատվել է <<Արփի լիճ>> ազգային պարկ>> ՊՈԱԿ-ի սահմանների նկարագիրը, հատակագիծը, տարածքային չափը և հողերի նպատակային նշանակությունը փոփոխությունը:

Պատասխանողին վարձակալությամբ տրամադրված հողատարածքը Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 21-ի թիվ 1151-Ն որոշմամբ անհատույց, անժամկետ օգտագործման իրավունքով տրամադրվել է <<Արփի լիճ>> ազգային պարկ>> ՊՈԱԿ-ին:

Նման պայմաններում դատարանը հաստատված է համարում այն հանգամանքը, որ պատասխանող կողմն ի սկզբանե հողամասի վարձակալության պայմանագիրը կնքել է ՀՀ Շիրակի մարզպետարանի հետ և սույն դեպքում որպես պատշաճ հայցվոր /կողմ/ չի կարող հանդես գալ <<Արփի լիճ>> ազգային պարկ>> ՊՈԱԿ-ը և նշված հողատարածքը հայցվոր կողմին տրամադրվել է ընդամենը՝ անհատույց, անժամկետ օգտագործման

իրավունքով և նշված կազմակերպության անվամբ հողամասի սեփականության իրավունք գրանցված չէ, փոխարենը՝ համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի՝ մարզ Շիրակ, համայնք Ամասիա հողամասը ՀՀ կառավարության 21.07.2011թ. թիվ 1151-Ն որոշման համաձայն հանդիսանում է Հայաստանի Հանրապետության սեփականությունը, կադաստրային ծածկագիրը՝ 08-010-0000-0000, մակերեսի չափը /հա/՝ 21179,3:

Հայցվոր՝ <<Արփի լիճ>> ազգային պարկ>> ՊՈԱԿ-ի կողմից դատարան չի ներկայացվել որևէ ապացույց այն մասին, որ պատասխանողին վարձակալության տրամադրված հողամասի ներկայիս սեփականատերը հանդիսանում է <<Արփի լիճ>> ազգային պարկ>> ՊՈԱԿ-ը, այսինքն վարձատու կազմակերպության փոփոխման վերաբերյալ տեղեկատվությունը:

Բացի այդ, վարձակալության տրամադրված հողամասի սեփականատիրոջ և վարձավճարի չափի վերաբերյալ փոփոխության դեպքում վարձատուն պարտավոր էր վարձակալին նախօրոք տեղեկացնել հողամասն այլ անձանց տնօրինության, սեփականությանը փոխանցելու և վարձավճարի չափի վերաբերյալ, որի փաստը հաստատվում է 2005 թվականի հուլիսի 07-ին Հայաստանի Հանրապետության ի դեմս Շիրակի մարզպետ՝ Ռոմիկ Մանուկյանի և Համլետ Քոթանջյանի միջև կնքված հողամասի վարձակալության մասին պայմանագրի՝ կողմերի իրավունքներն ու պարտականությունները բաժնի 7.2 կետով և 9 կետերով:

Ելնելով վերոգրյալ փաստական հանգամանքներից դատարանը գտնում է, որ հայցապահանջը պետք է մերժել ամբողջությամբ, քանի որ համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47 հոդվածի 1-ին կետի՝ գործով ապացույցներ են սույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված կարգով ձեռք բերված տեղեկությունները, որոնց հիման՝ վրա դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48 հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:

Նույն հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49 հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ապացույցները ներկայացնում են գործին մասնակցող անձինք:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47, 48 և 49 հոդվածների իրավական վերլուծությունից հետևում է, որ գործին մասնակցող անձինք պարտավոր են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47 հոդվածով սահմանված ապացույցներով ապացուցել իրենց պահանջների և առարկությունների հիմքում ընկած հանգամանքները: Վերջին հաշվով յուրաքանչյուր գործով կողմերի միջև ապացուցման պարտականությունը բաշխում է դատարանը՝ պարզելով գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը և ելնելով գործին մասնակցող անձանց պահանջներից և առարկություններից: Ընդ որում, գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի առկայությունը կամ բացակայությունը վիճելի լինելու դեպքում, դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 51 հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործի հանգամանքները, որոնք, օրենքի կամ այլ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ

ապացույցներով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53 հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 54 հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գրավոր ապացույցներ են գործի համար նշանակություն ունեցող հանգամանքների մասին տեղեկություններ պարունակող ակտերը, պայմանագրերը, տեղեկանքները, գործարար թղթակցությունը, այլ փաստաթղթերը և նյութերը, այդ թվում՝ էլեկտրոնային կամ կապի այլ միջոցով կամ փաստաթղթերի իսկությունը հաստատելու հնարավորություն ընձեռող այլ եղանակով ստացված ապացույցները: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գրավոր փաստաթղթերը ներկայացվում են բնօրինակով կամ պատշաճ վավերացված պատճենի ձևով: Եթե քննվող գործին վերաբերում է փաստաթղթի միայն մեկ մասը, ներկայացվում է դրա պատշաճ վավերացված քաղվածքը: Փաստաթղթերի բնօրինակները ներկայացվում են այն դեպքում, եթե գործի հանգամանքները, օրենքներին կամ այլ իրավական ակտերին համապատասխան, կարող են հաստատվել միայն նման փաստաթղթով, իսկ անհրաժեշտության դեպքում՝ դատարանի պահանջով:

Տվյալ դեպքում հայցվոր կողմն իր կողմից ներկայացված պահանջը հիմնավորող ապացույցներ դատարան չի ներկայացրել:

Դատարանը քննության առնելով դատական ծախսերի հարցը ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68 և 73 հոդվածների պահանջներով և հիմք ընդունելով՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն սկզբունքով, գտնում է, որ հայցվորը հայցադիմումը դատարան ներկայացնելիս պետական տուրքի գումար չի վճարել, համապատասխան միջնորդությամբ խնդրել է այն հետաձգել, հարցին անդրադառնալ վճռով, դատարանը միջնորդությունը բավարարել է, ուստի գտնում է, որ 1.498.000 /մեկ միլիոն չորս հարյուր իննսունութ հազար/ ՀՀ դրամին հաշվարկվող պետական տուրքը՝ 29.960 /քսանինը հազար ինը հարյուր վաթսուն/ ՀՀ դրամը հօգուտ ՀՀ պետական բյուջեի պետք է բռնագանձել հայցվոր՝ <<Արփի լիճ>> ազգային պարկ>> ՊՈԱԿ-ից:

Դատարանը քննության առնելով հայցի ապահովման միջոցի հարցը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101 հոդ. գտնում է, որ այն պետք է վերացնել, սույն վճռի օրինական ուժի մեջ մտնելուց հետո:

Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-132 հոդվածներով, դատարանը.

Վ Ճ Ռ Ե Ց

<<Արփի լիճ>> ազգային պարկ>> ՊՈԱԿ-ի հայցն ընդդեմ Համլետ Արշակի Քոթանջյանի, երրորդ անձ՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին մերժել, անհիմն լինելու պատճառով:

28.02.2018 թվականի որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը համարել վերացված վճռի օրինական ուժի մեջ մտնելուց հետո:

Հայցվոր՝ <<Արփի լիճ>> ազգային պարկ>> ՊՈԱԿ-ից հօգուտ ՀՀ պետական բյուջե, որպես հայցադիմումը դատարան ներկայացնելու համար չվճարված հետաձգված մասով պետական տուրքի գումար բռնագանձել այն է՝1.498.000 /մեկ միլիոն չորս հարյուր իննսունութ հազար/ ՀՀ դրամին հաշվարկվող պետական տուրքը՝ 29.960 /քսանինը հազար ինը հարյուր վաթսուն/ ՀՀ դրամ:

Վճիռը վերաքննության կարգով կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման պահից 1 /մեկ/ ամսյա ժամկետում:

Վճիռը օրինական ուժի մեջ մտնելուց հետո, կամովին չկատարելու դեպքում, ենթակա է կատարման դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով:

ԴԱՏԱՎՈՐ՝ Ս. ՄՆԱՑՅԱՆ

Վճիռը մտել է օրինական ուժի մեջ՝ 03. հունվարի 2019թ.:

ԴԱՏԱՎՈՐ՝ Ս. ՄՆԱՑՅԱՆ

Քարտուղար՝ Հ. Խաչատուրյան